ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Ավստրիայի Հանրապետություն և Գերմանիայի Դաշնային Հանրապետություն ս. թ. մարտի 30-ից ապրիլի 2-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - Գերմանիայի Դաշնային Հանրապետությունwum ՀՀ Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Աշոտ Սմբատյան,
   - Վիեննայի «Արարատ» հայկական մարզական միության պատվո նախագահ Սեպուհ Պաղտոյեան և միության նախագահ Կարապետ Պաղտոյեան,
   - Գերմանիայի Հայոց Թեմի Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տեր Սերովբէ վարդապետ Իսախանյան:

5. **Գործուղման նպատակը՝**
   - Մասնակցություն Եվրահայկական 23-րդ խաղերին,
   - Մասնակցություն Արցախի ազատագրական պայքարի 30-ամյակին նվիրված միջոցառմանը,
   - Համայնքային հանդիպումների կազմակերպում:

6. **Քննարկման թեմաները՝**
   - ՀՀ Նախագահի կողմից նախարարության առջև դրված ռազմավարական երեք խնդիրները (նպաստել հայապահպանությանն ու ազգային ինքնության պահպանմանը, Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման նպատակով նպաստել հայկական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը, մշակել և իրականացնել հայրենադարձությունը խթանող ծրագրեր),
   - «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքների մասին,

- Համյանքային կառույցների ղեկավարների հետ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի արդյունքներից բխող ծրագրերի իրականացման մասին,
- 2018թ. Հայաստանում անցկացվելիք ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի մասին,
- 2018 թ. Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին,
- 2018թ. Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումնեի մասին,
- Արցախի, սահմանապահ գյուղերի օգնության կազմակերպման մասին,
- Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայսատան այցելությունների կազմակերպում,
- Հայրենադարձությունը խթանող ծրագրերի մասին:

7. Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ՝

- Ավստրիա-Հայաստան խորհրդարանական խմբի ղեկավար Գուդրուն Քուգլերի հետ,
- Ավստրիայի Հայ Առաքելական եկեղեցական համայնքի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Անդրեաս քահանա Իսախանյանի հետ,
- Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Հոգեշնորհ Տեր Տիրան վարդապետ Պետրոսյանի հետ,
- Գերմանիայի Հայոց Թեմի Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տեր Սերովբէ վարդապետ Իսախանյանի հետ,
- Գերմանիայի Հայ գործարարների միության նախագահ Մուրադ Աքյուզի և միության անդամներին հետ,
- Բոխումի համալսարանի «Սփյուռք և ցեղասպանություն» հետազոտությունների կենտրոնի ղեկավար Միհրան Դաբաղի և կենտրոնի աշխատակիցների հետ,
- Գերմանահայոց կենտրոնական խորհրդի վարչության նախագահ Շավարշ Հովասափյանի և կենտրոնական խորհրդի անդամների հետ,
- Քյոլնի հայ համայնքի վարչության ատենապետ Մինու Նիգբայի և վարչության անդամների հետ,
- Վիեննայի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչների հետ,

- Եվրահայկական խաղերի կազմակերպչական կոմիտեի անդամների հետ:

Ելույթներ՝

- Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանատանը՝ Վիեննայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Եվրահայկական 23-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողության ժամանակ,
- Վիեննայի Մխիթարյան միաբանությունում՝ միաբանության անդամների հետ հանդիպման ժամանակ,
- Եվրահայկական 23-րդ խաղերի մարզիկների հետ հանդիպման ժամանակ,
- Քյոլնի Հայ Առաքելական Սբ. Մեսրոպ եկեղեցում՝ Արցախյան ազգային-ազատագրական շարժման 30 ամյակին նվիրված միջոցառման ժամանակ,
- Քյոլնի համայնքի առջև:

Հարցազրույցներ՝

- Հարցազրույց Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը
- Հարցազրույց Ավստրիայի «OKTO» հեռուստաընկերությանը:

Բարձրացված հարցեր՝

- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունությունը,
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ,
- Աշխատանքներ տանել ավստրիացի, գերմանացի և հայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Հասնել այն բանի, որ յուրաքանչյուր հայ այցելի Հայաստան, ճանաչի իր Հայրենիքը, նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,

- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,
- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով,
- Նախապատրաստական աշխատանքներ տանել հայրենադարձության քարոզչության ուղղությամբ,
- Կարևորել «հին» և «նոր» սփյուռքերի գործակցության հարցերը,
- Ներդրումներ անել Հայաստանի Հանրապետությունում,
- Բնակարանների գնել Հայաստանի Հանրապետությունում:

Մարտի 30, 2018թ.

Նախարարը ժամանեց Վիեննա:

Մարտի 30, 2018թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Հայաստանի Հանրապետության դեսպանությունում հանդիպել է Վիեննայի հայ համայնքի կառույցների ու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ողջունելով ներկաներին՝ նախարար Հրանուշ Հակոբյանը գոհունակությամբ նշել է, որ Վիեննայի հայ համայնքը աչքի է ընկնում իր կազմակերպվածությամբ, համայնքային կառույցները սերտորեն համագործակցում են Սփյուռքի նախարարության հետ, մասնացում նախարարության ծրագրերին: Ներկայացնելով Հայաստան-Սփյուռք գործակցության ողջ ընթացքը՝ նախարարն անդրադարձել է հայկական սփյուռքի առանձնահատկություններին, զարգացման շրջափուլերին, ներկա խնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև ՀՀ Նախագահի կողմից նախարարության առջև դրված ռազմավարական երեք խնդիրներին (նպաստել հայապահպանությանն ու ազգային ինքնության պահպանմանը, Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման նպատակով նպաստել հայկական ներուժի հայտնաբերմանն ու համախմբմանը, մշակել և իրականացնել հայրենադարձությունը խթանող ծրագրեր): Նախարարը նշել է, որ նախարարության ծրագրերի մեծ մասն ուղղված են Սփյուռքում հայ ինքնության, մայրենիի, հայկական մշակույթի պահպանմանը, իսկ Հայկական ներուժի համախմբման նպատակով գործում են մի շարք համահայկական մասնագիտական

ընկերակցություններ՝ Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ասոցիացիան, Լրատվամիջոցների համահայկական ընկերակցությունը, Իրավաբանների համահայկական խորհրդաժողովը, «Հայկական առևտրային ցանց» կազմակերպությունը, Հայ բժիշկների միջազգային կոմիտեն, Հայ ոսկերիչների ասոցիացիան, Ֆինանսիստների և բանկիրների համահայկական ընկերակցությունը և այլն, որոնց հետ նախարարությունը պարբերաբար գումարում է համաժողովներ, անցկացնում գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ: Նախարարը նշել է նաև, որ ընկերակցությունների անդամները սերտորեն համագործակցում են, աշխատում միասին, համատեղ ծրագրեր իրականացնում: Նախարար Հրանուշ Հակոբյանը իր խոսքում անդրադարձել է նաև մյուս ռազմավարական խնդրին՝ հայրենադարձության խթանմանը, որի համար նախարարությունը մշակում է համապատասխան օրենքի նախագիծ, ռազմավարություն և ծրագիր: Ներկայացնելով Հայաստան-Սփյուռք գործակցության արդյունքները՝ Սփյուռքի նախարարը հատկապես կարևորել է, որ Սփյուռքը դարձել է հայաստանակենտրոն, ստեղծվել են Հայաստան-Սփյուռք գործակցության իրավական հիմքերը, գործընկերային կապեր են հաստատվել գրեթե բոլոր համայնքների և համահայկական կառույցների հետ, կնքվել են պայմանագրեր, մշակվել, իրականացվել և շարունակվում են հաջողությամբ իրականացվել նախարարության 26 ծրագրեր, որոնց մի մասը իրականացվում է սփյուռքյան կառույցների հետ համատեղ: Նախարարը ընդգծել է, որ ընդլայնվել են ծրագրերին մասնակցության աշխարհագրությունը և մասնակիցների թիվը, ստեղծվել են համահայկական մասնագիտական ընկերակցություններ, պատրաստվել են սփյուռքագետներ, հետազոտվել են Սփյուռքի հիմնախնդիրները, Հայաստանում իրականացվող բազմաթիվ ծրագրեր (կրթական, մշակութային, երիտասարդական և այլն) դարձել են համահայկական և ձեռք են բերել սփյուռքյան բաղադրիչ: Հանդիպման մասնակիցների հետ նախարար Հրանուշ Հակոբյանը զրուցել է նաև Հայաստանում ներդրումային քաղաքականության, առկա արդյունքների, զբոսաշրջության զարգացման մասին, ներկայացրել է սիրիահայերի հետ տարվող աշխատանքները, իրականցվող ծրագրերը, պատասխանել է ներկաների հարցերին: Հանդիպման ավարտին ներկաները շնորհակալություն են հայտնել նախարարին ծավալուն ելույթի և սպառիչ պատասխանների համար:

- Այնուհետև նախարարը հանդիպել է Եվրահայկական խաղերի կազմակերպչական կոմիտեի անդամներին, քննարկել խաղերի կազմակերպման հարցերը: Շնորհակալություն հայտնելով այդ ծավալուն աշխատանքների կազմակերպման համար՝ նախարարը կարևորել է Հայաստանից, Թուրքիայից, Լիբանանից և Վրաստանից խմբերի

մասնակցությունը: Նախարարը նաև կոչ է արել պատրաստվել 2018թ Համահայկական խաղերին:

Մարտի 31, 2018թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցել է Եվրահայկական 23-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությանը: Ողջունելով ներկաներին՝ նախարարն իր խոսքում ընդգծել է, որ Եվրահայկական խաղերը բոլորի համար դարձել են իսկական հայկական տոն, որոնք մարզական մրցումներ լինելուց բացի, իրենց մեջ կրում են համերաշխություն, միմյանց ճանաչելու, ընկերական սերտ կապեր ստեղծելու լավ հնարավություն, ինչպես նաև՝ միասնականության արտահայտություն: ՀՀ սփյուռքի նախարարն ընդգծել է, որ հայ ժողովրդի ճանապարհի ամենակարևոր ձեռքբերումներից է, հատկապես, վստահ, ուժեղ, կրթված ու կայացած նորօրյա սերունդը՝ երիտասարդ-եիտասարդուհիները, ովքեր հայ ազգի ու պետության վաղվա օրվա առհավատչյան են, և հենց ներկայիս երիտասարդ սերնդի միասնականությամբ կարելի է դժվարությունները հաղթահարելով ավելացնել հայ ժողովրդի ձեռքբերումները, Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնությամբ ունենալ հզոր, զարգացած Հայաստան, անկախ ու անվտանգ Արցախ, արդունավետորեն պայքարել հայապահպանության, ինչպես նաև միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Ամփոփելով խոսքը՝ նախարարը շնորհակալություն է հայտնել Վիեննայի «Արարատ հայկական միության պատվո նախագահ Սեպուհ Բաղդոյանին, միության անդամներին՝ Եվրահայկական 23-րդ խաղերը հյուրընկալելու համար և խաղերի բոլոր տարիների կազմակերպիչներին, հիմնադիրներին, մարզիկներին, մասնակիցներին ու աջակիցներին մաղթել հաջողություններ ու ձեռբերումներ՝ ի շահ Հայրենիքի և Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման: Ողջույնի խոսքով հանդես են եկել նաև Ավստրիայում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանը, Վիեննայի «Արարատ» հայկական միության պատվո նախագահ Սեպուհ Բաղդոյանը և Ավստրիայի դաշնային խորհրդարանի Ավստրիա-Հայաստան խորհրդարանական խմբի ղեկավար Գուդրուն Քուգլերը: Խաղերի ընթացքում նախարարը

հարցազրույցները տվել Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը և Ավստրիայի «OKTO» հեռուստաընկերությանը:

- Այնուհետև նախարարը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն Ավստրիայում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանի ուղեկցությամբ այցելել է Վիեննայի Մխիթարյան միաբանություն, հանդիպել միաբանության անդամների հետ: Բարձր գնահատելով միաբանության հսկայական ժառանգությունը, նրա անդամների կատարած աշխատանքն ու թողած հետքը՝ նախարար Հրանուշ Հակոբյանը նշել է, որ մեր հոգևոր հայրերը կարողացել են և՛ Վենետիկում, և՛ Վիեննայում ստեղծել այնպիսի ազգային մշակույթ, այնպիսի մեծ արժեքներ, որոնք դարեր շարունակ ոչ միայն չեն անհետացել, այլև զարգացել և դարձել հայկականության կենտրոններ, փոքր հոգևոր հայաստաններն Եվրոպայի սրտում: Սփյուռքի նախարարը Վիեննայի Մխիթարյան կենտրոնը համարել է հայագիտության, գիտության, կրթության կենտրոն, թանգարանային արժեք ունեցող հաստատություն՝ հարուստ գրադարանով և ձեռագրատնով: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100 ամյակների տոնակատարություններին առնչվող հարցեր:
- Նույն օրը նախարար Հրանուշ Հակոբյանը Ավստրիայում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանի ուղեկցությամբ այցելել է Վիեննայի Հայ Առաքելական Սբ. Հռիփսիմե եկեղեցի և մասնակցել Սբ. Հարության Ճրագալույցի պատարագին: Պատարագիչն է եղել Ավստրիայի Հայ Առաքելական եկեղեցական համայնքի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Անդրեաս քահանա Իսախանյանը, ով վերջում կատարել է Տնօրհնեքի արարողություն: Պատարագին ներկա են գտնվել նաև Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Հոգեշնորհ Տեր Տիրան վարդապետ Պետրոսյանը, ավստրիայի հայ համայնքի ներկայացուցիչներ և այլ հյուրեր:
- Երեկոյան ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Եվրահայկական 23-րդ խաղերի մարզիկների հետ: Նա նախ շնորհավորել է բոլորին Սուրբ Հարության տոնի առթիվ և կարևորել աշխարհի 15 երկրներից (Հոլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Չեխիա, Ռուսաստան, Նորվեգիա, Վրաստան, Անգլիա, Իտալիա, Շվեյցարիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Հայաստան, Թուրքիա, Ավստրիա) շուրջ 750 մասնակիցների ներկայությունը համահայկական սպորտային այս միջոցառմանը՝ նշելով, որ այն մեկ անգամ ևս խորհրդանշում է հայ

ժողովրդի միասնականությունը: Հրանուշ Հակոբյանն ընդգծել է, որ Համաեվրոպական խաղերի կազմակերպումը սոսկ մարզական միջոցառում չէ, այլ ազգային համախմբմանն ուղղված բացառիկ գործողություն: Նախարարը մասակիցներին առաջարկել է Հայրենիք գալ՝ Հայաստանի Հանրապետության կազմավորման, Մայիսյան հերոսամարտերի 100 և Երևանի հիմնադրման 2800-ամյակներին նվիրված հոբելյանական միջոցառումները միասին տոնախմբելու համար: Նախարար Հ. Հակոբյանը սփյուռքահայ երիտասարդներին հորդորել է կառչած մնալ իրենց արմատներին, ազգային ինքնությանը, օտար ափերում սրբորեն պահպանել Մայրենին և սերտացնել կապը Հայրենիքի հետ: ՀՀ սփյուռքի նախարարը նաև նրանց հրավիրել է՝ մասնակցելու ՀՀ սփյուռքի նախարարության կողմից հուլիսի 6-8-ը կազմակերպվող Երիտասարդական համահայկական համաժողովին: Այնուհետև նախարարը Եվրահայկական 23-րդ խաղերին մասնակցող թիմերին հանձնել է ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրեր, իսկ Վիեննայի «Արարատ» հայկական միության պատվո նախագահ Սեպուհ Բաղդոյանին պարգևատրել է Երախտագիտության մեդալով:

Ապրիլի 1, 2018թ.

Առավոտյան նախարարը ժամանեց Քյոլն:

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Գերմանիայում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանի ուղեկցությամբ ներկա է գտնվել Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով տեղի ունեցած Պատարագին, որը մատուցել է Գերմանիայի Հայոց Թեմի Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տեր Սերովբէ վարդապետ Իսախանյանը:
- Ապա նախարարը առանձին հանդիպում է ունեցել Գերմանիայի Հայոց Թեմի Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տեր Սերովբէ վարդապետ Իսախանյանի հետ, և քննարկել են եկեղեցու դերակատարությունը համայնքի համախմբման և ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերի մասնակցության գործում:

- Այնուհետև նախարարը Քյոլնի Սբ Սահակ-Մեսրոպ եկեղեցում մասնակցել է Արցախյան ազատագրական շարժման 30 ամյակին նվիրված միջոցառմանը: Միջոցառումը կազմակերպվել էր Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության հովանավորությամբ և Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի, Գերմանահայոց կենտրոնական խորհրդի, Գերմանիայի Հայ գործարարների միության կողմից: Միջոցառմանը ներկա է եղել Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի պատվիրակությունը՝ փոխնախագահ Վահրամ Բալայանի գլխավորությամբ: Բացման խոսքով հանդես է եկել Գերմանիայում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը: Ելույթ է ունեցել նաև Արցախի Հանրապետության ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը: Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Շնորհավորելով ներկաներին Սուրբ Հարության հրաշափառ տոնի առթիվ՝ նախարար Հրանուշ Հակոբյանը նշել է, որ հայ ժողովրդի պատմությունը հարություն առած ազգի պատմություն է, որը, անցնելով Ցեղասպանության գողգոթան, իր ամենաողբերգական ժամանակը դարձրեց հաղթանակի ժամանակ: Անդրադառնալով Արցախյան ազատագրական շարժմանը՝ Սփյուռքի նախարարն ընդգծել է, որ Արցախի ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը կարողացավ համախմբվել, բռունցքվել, շարժումը դարձավ դարերով հայ ժովովրդի մեջ խտացած ազատության, միավորման կանչը, արթնացրեց ողջ հայությանը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Նախարար Հրանուշ Հակոբյանը, անդրադառնալով Արցախի ներկային, նշել է, որ այն այսօր իր ժողովրդավարական համակարգով, անցկացվող ընտրությունների թափանցիկությամբ և օրինականությամբ, պետական ինստիտուտներով կայացած պետություն է, և ամբողջ հայ ժողովուրդը պետք է սատարի ԼՂ հիմնախնդրի կարգավորմանը և Արցախի զարգացմանը: Միջոցառման ավարտին նախարար Հրանուշ Հակոբյանը Գերմանիայի Հայ գործարարների միության նախագահ Մուրադ Աքյուզին, միության խորհրդի անդամներին և Գերմանահայոց կենտրոնական խորհրդի վարչության նախագահ Շավարշ Հովասափյանին հանձնել է նախարարությանը պարգևներ: Միջոցառմանը ընթացքում տեղի է ունեցել նաև Սուրբ Հարության տոնին նվիրված ծիսակատարություն:

Ապրիլի 2, 2018թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպել է Քյոլնի հայ համայնքի վարչության անդամներին: Նախարարը կարևորել է համայնքի կազմակերպվածությունը, համայնքի վարչության անդամների կատարած աշխատանքը: Նախարար Հրանուշ Հակոբյանը հորդորել է համայնքում սրբորեն պահպանել մայրենի լեզուն, հայ ինքնությունն ու կապը Հայրենիքի հետ, ակտիվորեն մասնակցել նախարարության «Արի տուն», «Սփյուռք» ամառային դպրոց ծրագրերին, «Իմ Հայաստան» փառատոնին, «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխությանը, հուլիսի 6-8-ը կայանալիք համահայկական երիտասարդական հավաքին:
- Այնուհետև նախարարը հանդիպել է Գերմանահայ գործարարների միության անդամներին: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում ներդրումային միջավայրին, հնարավորություններին ու հեռանկարներին, զբոսաշրջության զարգացմանն առնչվող հարցեր: Նախարար Հրանուշ Հակոբյանը հանդիպում է ունեցել նաև Գերմանահայոց կենտրոնական խորհրդի անդամների հետ: Հանդիպման առանցքում են եղել Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 100, Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800 ամյակներին նվիրված տոնակատարությունների անցկացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի հայ համայնքներում:
- Երեկոյան եկեղեցու սրահում նախարարը հանդիպել է Քյոլնում գործող բոլոր հայկական հասարակական կառույցների ղեկավարներին, և քննարկվել է համակարգող մարմին ստեղծելու հարցը: Ներկաները գոհունակությամբ են ընդունել գաղափարը և նապատակահարմար գտել առաջնորդական ընտրություններից հետո անդրադառնալ այդ խնդրին:

Ապրիլի 3, 2018թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը այցելել է Բոխումի համալսարանի «Սփյուռք և ցեղասպանություն» հետազոտությունների կենտրոն և հանդիպում ունեցել կենտրոնի ղեկավար Միհրան Դաբաղի և կենտրոնի աշխատակիցների հետ: Երկուստեք կարևորվել է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման, հետևանքների վերացման գործընթացը:

Ապրիլի 3, 2018թ.

Երեկոյան նախարարը վերադարձել է Երևան:

8. **Գործուղվողը՝**
   Հրանուշ Հակոբյան

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**
   04. 04. 2018թ.